ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի դեկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 59113.4 մլն դրամ՝ 58200 մլն դրամ ճշգրտված պլանային ցուցանիշը գերազանցելով 1.6 տոկոսով կամ 913.4 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 10.6 տոկոսով կամ 5649.1 մլն դրամով:

Դեկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 6909.3 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 26.7 տոկոսով կամ 1456.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 165 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 11 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 44 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 261 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 27 ստուգում՝ 258.7 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում հաշվետու ամսում շարունակվել են հսկողական միջոցառումները ուղղված հարկ վճարողների կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման դեպքերի բացահայտմանը, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 10 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 83 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 43-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 9-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 25 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել 24 բռնագանձման հայց՝ 78479.1 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 3 հայցադիմում՝ 40 հազ. դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել են

բռնագանձման հայցերով 9 գործ՝ 63408.8 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրության հայցերով 10 գործ՝ 165 հազ. դրամ գումարով և 1 սնանկության գործ՝ 1737.1 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 138 վարչական գործով սահմանվել է 1.8 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7529 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6904:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 78 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում դեկտեմբեր ամսում կատարվել է վերադարձ 11 վարձու աշխատողի՝ 2 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 33 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 8-ի N 205 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

ԱՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Չօգտագործված հատուկ հարկային հաշիվների մնացորդների հաշվառման և անվավեր ճանաչման աշխատանքների կազմակերպման մասին» հրամանը, փոփոխություններ կատարվել «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» և «Հարկային մարմնում ծառայողական քննության անցկացման մասին» հրամաններում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Դեկտեմբերի 26-ին 124 հարկ վճարողների շնորհվել է օրինապահ հարկ վճարողի կարգավիճակ և տրամադրվել հավաստագրեր: Օրինապահ հարկ վճարողների ընտրությունը կատարվել է համաձայն հաստատված չափանիշների՝ խոշոր, միջին և փոքր հարկ վճարողների շրջանում ու

նպատակ ունի հարկ վճարողների մոտ ձևավորել և ամրապնդել հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթը:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2019 թվականի 4-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 2900 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ամսում գործարկվել է ֆինանսների նախարարության e-taxpayer բջջային հավելվածը, որը թույլ է տալիս ծանոթանալ հարկային օրենսդրական և ենթաօրենսդրական նորություններին, ստանալ ծանուցումներ հարկային մարմին հանձնված հաշվետվությունների, վճարած հարկերի, ստացված հարկային հաշիվների և հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծումների գործարքների վերաբերյալ: Բջջային հավելվածի միջոցով նաև հնարավոր է ուղարկել դիմումներ՝ գործունեության սկսման, դադարեցման, պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև հարկային օրենսդրության այս կամ այն հարցի շուրջ պարզաբանումներ ստանալու նպատակով:

Հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միօրինակությունն ու միասնականությունն ապահովելու և դրանց որակը բարձրացնելու նպատակով ԱՀ ֆինանսների նախարարի 18.12.2019թ. N 359 հրամանով հաստատվել են հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը և մատուցվող ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետներն ու տրամադրման ձևերը, որոնք տեղադրվել են կայքէջի «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» բաժնում:

Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների տեղեկացվածության բարձրացման նպատակով մասնակիցներին հնարավորություն է ընձեռվել կենսաթոշակային հաշիվները ստուգել «Արցախբանկ» ՓԲԸ բանկոմատների միջոցով, որոնցով հնարավոր է ստանալ անհատական կենսաթոշակային հաշվի մնացորդի, ինչպես նաև հաշվով կատարված վերջին 10 գործառնությունների պատմությունը:

Հաշվետու ամսում մեկնարկել է կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակից քաղաքացիների վճարված սոցիալական վճարների գումարների վերահաշվարկի գործընթացը, որի շրջանակներում նախարարությունը ծանուցումներ է ներկայացրել թվով 225 քաղաքացիների, որոնցից 142-ը դեկտեմբեր ամսում ներկայացրել են բանկային հաշիվները և ստացել սոցիալական վճարի ավել վճարված մասը:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 290, ելքագրվել՝ 228 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով: